

ՔԻՒՐԴԱԿԱՆ ԵՐՐԵԱԿ ԻՇԻԱՆԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՔԻՒՐԴԻՍՏԱՆԻ ՄԷՋ

(Երզրումեն Պօհդան ու Հեֆեսի)

Քիւրդական քաղաքական գործերու ու դէպքերու մասին մինչ ցարդ ինչ որ սնծանօթ է մնացիւր, օտար պատմիչներու, մենք կը զաննէք անոնց աւանդական բանաւոր պատմութեանէրու և զիւրցալներգութիւններու մէջ՝ որ կ'երգէ Քիւրդ ժողովուրդը:

Բուն Քիւրդական պատմութիւնը Քիւրդերու համար, Երզն է. ուր չկայ Երզը, կը նշանակէ պատմութիւնը չունի արժէք մը, և հետևապէս պատմութիւն համարուելէ կը դադրի. Ուրհմն՝ ոչ թէ անհատը, այլ ժողովուրդն է որ իր պատմութիւնը կը գծէ բանաւոր ու եղանակաւոր: Գիրը անոնց համար յետին ժամանակներու գործ է, յատուկ մէկ երկու գրագէտներու՝ որոնք իրենց ուսումն ստացած են Քիւրդական միջավայրէ դուրս:

Ինչպէս ամեն հերոսական գործ՝ նոյնպէս և Քիւրդական Երրեակի իշխանապետութիւնն ու իր պատմական կիսնքը կ'երգուի երգերու մէջ. և բանաւորապէս երգը կ'ընդարձակուի ու կը պատմուի հիացման տպաւորութիւններով:

Երրեակի իշխանապետութիւնը հաստատուած էր մէկը ի Հէքեարի, երկրորդը Պօհտանը, երրորդը Էրզրում:

Ալաախ - Պէյի Պապոնց տունը երկու կէս դար առաջ կը նստէր Ջրիք, Մոկուհայ բերդերու մէջ՝ Մուշէն կէս ժամ հեռաւորութեան վրայ, առաջինը դէպ ի հիւսիս, երկրորդը դէպ արևելքը: Այս տունը դաշնակցած Պարսոյի Տիարի և Պօհտանի Պէարխանի պապերու հետ, պատերազմ կը մղեն Հէքեարիի պէյերուն հետ:

Պատերազմ մը որ տեղի կ'ունենայ Պէրվէրու մօտ Արկօլ լիւրը, կը հաւաքուին մինչև 60,000 կուռղ: